




Գիտություն

ԱՊՐԻԼ

№ 2


(196)

2007 թ.

Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ



Ա.թ. ապրիլի 4-6-ը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը, որը հանրագումարի բերեց հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված արդյունքները և գնահատական տվեց սկսված գիտության բարեփոխումների

ուղղությամբ կատարված աշխատանքներին:

Ապրիլի 4-ին և 5-ին ԳԱԱ բաժանմունքներում կայացած ժողովները անցան շահագրգիռ քննարկումների, ակադեմիայի վաղվա օրվա համար և Հայաստանի գիտական ներուժի պահ-

պանության և զարգացման մտահոգությամբ:

Ապրիլի 6-ին կայացավ Գիտությունների ազգային ակադեմիայի հանրագումարային ժողովը, որին ներկա էին Հայաստանի Հանրապետության վարչապետ Սերժ ՍԱՐԳՍՅԱՆԸ,

Ազգային ժողովի նախագահ Տիգրան ԹՈՐՈՍՅԱՆԸ, ՀՀ Գիտության և կրթության նախարար Լևոն ՄԿՐՏՉՅԱՆԸ, Արշակ սրբազան ԽԱՉԱՏՐՅԱՆԸ, Ազգային ժողովի պատգամավորներ, բարձրաստիճան հյուրեր:

Ներածական խոսքով ժողովը բացեց Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ: Այնուհետև Ռ. Մարտիրոսյանը հանգամանորեն ներկայացրեց ակադեմիայի գլխավոր ձեռքբերումները՝ Գիտության զարգացման նոր հայեցակարգի, Գիտության բարեփոխումների ուղղությամբ ձեռնարկված աշխատանքների ընթացքը ու նախանշեց այն գլխավոր խնդիրները, որոնք այսօր ծառացած են Գիտությունների ակադեմիայի և նրա ստորաբաժանումների առջև:

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի զեկուցումը (մասնակի կրճատումներով տպագրված է թերթի ներկա համարում):

Այնուհետև նախագահողը ամբիոնի մոտ հրավիրեց ՀՀ

ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, Դուբնայի միջուկային ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն Ալեքսեյ Սիսակյանին: Վերջինս հանգամանորեն ներկայացրեց ՌԴ ԳԱ վերջերս կայացած ժողովի մանրամասները: Ժողովը միակամ մեծել էր պետական չինովնիկների կողմից մշակված ՌԴ ԳԱ նոր կանոնադրությունը և միաձայն որոշել, որ Ռուսաստանի Ակադեմիայի կանոնադրության նախագծի մշակումը պետք է միայն ու միայն վերապահվի ակադեմիային ու նրա անդամներին: Միանգամայն ճշմարիտ որոշում, որը, կարծում ենք, պիտի օգտակար նախադեպ լինի նաև մեզ համար, և մեր ակադեմիան պետք է դրսևորի կամք, որպեսզի Գիտության բարեփոխումների ծրագիրը թելադրեն ոչ թե Գիտությունից հեռու կանգնած մարդիկ, այլ հենց իրենք՝ ակադեմիան և հայ գիտնականները:

Այնուհետև բեմ հրավիրվեց Ռուսաստանի

> 2



Նորից եկավ ս. Չատիկը: Նորից մարդիկ կիսմբվեցին եկեղեցիների, վանքերի տարածքում, կլավեցին մոմեր, խնկաբույրը կտարածվի շրջակայքում ու մարդիկ միմյանց կասեն.

- Քրիստոս հարյալ ի մեռելոց,


- Օրհնյալ է հարությունը Քրիստոսի

Մենք ավանդապահ ժողովուրդ ենք, ամենուր կառուցում ենք եկեղեցիներ, աղոթավայր ենք դարձնում ամեն մի բար, եթե վրան խաչ կա, կամ խաչանման նշան... Դա լավ է, չէ որ հավատքով ապրելը թեթևացնում է մարդու հոգին, նրան դարձնում լավատես ու անսահման բարի: Բայց, արդյո՞ք մեր հավատարմությունը ծեսին, ավանդին, բնորոշ է մեր հոգու էությանը: Չէ՞ որ հավատը առաջին հերթին նշանակում է հոգատարություն ու կարեկցություն թույլի, աղքատի, տկարի, դժվար կացության մեջ հայտնված մարդուն: Քրիստոնեական ավանդներով ու հավատարմությամբ ապրող ժողովուրդը ինչպե՞ս և ինչո՞ւ է այդքան խաղաղություն կառուցում, ինչո՞ւ են դեռատի աղջիկները խմբվում արտասահմանյան գրասաշրջիկների, ուսանողների, պաշտոնյաների շուրջը, ինչո՞ւ է մեր փոքր ազգը մարմնավաճառներ «առաքում» Արևելքի ու Արևմուտքի նավահանգիստները, ի՞նչ պատահեց մեր ազգին, ո՞րն են գնում մեր մեծահարուստների միջոցները, մի՞թե միայն ճոխ կերուխումներով է որոշվում մարդու հարստությունը:

Չատիկ է, սուրբ Չատիկ... Մենք գնացինք եկեղեցիներ, վանքեր, մոմ վառեցինք, խունկ ծխեցրինք, այցելեցինք մեր հանգուցյալների, նախնիների գերեզմաններին, շնորհավորեցինք հարազատներին, հարևաններին, նույնիսկ անծանոթներին: Այդպես է պահանջում քրիստոնեից մեր դավանանքն ու բարոյականությունը: Բայց կապրե՞նք, արդյոք, այդ սկզբունքներով ու դավանանքով: Սա՛ է գլխավորը, հիմնականը: Ինչե՛ն...

Շնորհավոր ս. Չատիկ, զարթոնքի ու հարության տոնը... Շնորհավոր...

Չատիկի օրերին Վանում վերաբացվեց ս. Խաչ եկեղեցին:



(Տես էջ 8)

ARMENPRESS



Ն¹ Դաշնության Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Յուրի Յովհաննիսյանը: Դաիլիժի բուռն ծափահարությունների ուղեկցությամբ ՅՅ ԳԱԱ պրեզիդենտ Ռ. Սարյիրոսյանը շնորհավորեց աշխարհահռչակ ֆիզիկոսին և նրան հանձնեց ՅՅ ԳԱԱ արտասահմանյան անդամի դիպլոմը:

Ակադեմիկոս Յու. Յովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց իր նկատմամբ Յայաստանի ակադեմիայի ցուցաբերած պատվի համար և ապա հանգամանալի ու չափազանց ուշագրավ գիտական հաղորդում տվեց «Գերծանր քիմիական տարրերի կայունության կղզիների հայտնաբերումը» թեմայով: Դուբնայի միջուկային ֆիզիկայի ինստիտուտում ակադեմիկոս Յուրի Յովհաննիսյանի գլխավորությամբ իրագործվող այդ հետազոտությունների հաջող ավարտը հայտնագործություն և նոր խոսք կլինի համաշխարհային գիտության մեջ: Այնուհետև Յուրի Յովհաննիսյանը ժողովի մասնակիցներին տեղեկացրեց մասնաժամանակում քվանտային տոմոգրաֆ ստեղծելու իր մտահղացման մասին:

Այնուհետև ծավալվեց ՀՀ ԳԱՍ 2006 թվականի գիտական և գիտակազմակերպչական գործունեության արդյունքների քննարկումը, որին մասնակցեցին ակադեմիկոս Արմեն ԳԱԼՈՅԱՆԸ, «Մետագրուպ» գիտատարտադրական միավորման տնօրեն Վլադիմիր ԳԱՄՊԻՐՅԱՆԸ, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Ազատ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ, ակադեմիկոս Յուրի ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ և ՀՀ Գիտության և կրթության նախարար Լևոն ՄԻՐՏՉՅԱՆԸ:

Ժողովը դրական գնահատական տվեց ՀՀ ԳԱԱ հաշվետու ժամանակաշրջանի գործունեությանը:

ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը
քննարկեց նաև կազմակերպչա-
կան հարցեր:

Փայե, գաղտնի քվեարկությամբ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-բարտուղար ընտրվեց ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ:

Նորաստեղծ Քիմիական և
երկրի մասին գիտությունների
բաժանմունքի ակադեմիկոս-
բարոտուլար ընտրվեց ԳԱՍ
թղթակից անդամ Արամ ՇԱՀԻՆ-
ՅԱՆԸ:

ՀՀ ԳԱԱ նախագահության
անդամ ընտրվեց Երևանի պե-
տական համալսարանի ռեկ-
տոր, ԳԱԱ թղթակից անդամ Ա-
րամ ՄԻՍՈՆՅԱՆԸ:

ԲԱՐԵՓՈՒՄՈՒՄՆԵՐԻ ԺԱՆԱՊԱՐՀԻՆ

**ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
ելույթը Կաթնկալի ընդհանուր ժողովում**

Հարգելի՛ ներկաներ, մեր ժողովին մասնակցում են ՀՀ Ազգային ժողովի նախագահ պարոն Թորոսյանը, վարչապետ պարոն Սարգսյանը, Կրթության և գիտության նախարար պարոն Մկրտչյանը, Մայր արոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Արշակ սրբազան Խաչատրյանը, Ազգային ժողովի հանձնաժողովի նախագահ տիկին Հակոբյանը, ՀՀ նախագահի խորհրդական պարոն Երիցյանը, բուհերի ղեկավարներ, նախարարներ, փոխնախարարներ:

Հարգելի՛ գործընկերներ, հաշվետու տարում մեր երկիրը, Գիտությունների ազգային ակադեմիան ունեցել են կորուստներ: Ամժանանակ մեզանից հեռացավ հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, մեր ակադեմիայի անդամներ Սիլվա Կապուտիկյանը, Գեորգի Տեր-Ստեփանյանը, Բենիամին Աբրահամյանը, Շաքրո Միոյանը: Խնդրում եմ նրանց հիշատակը հարգել մեկ րոպե լռությամբ:

Հարգելի ներկայներ, համաձայն կանոնադրությանը և պահպանելով տասնամյակների ընթացքում ստեղծված ավանդույթը՝ Գիտությունների ակադեմիան իր տարեկան ժողովին է ներկայացնում 2006 թ. հաշվետվությունը՝ գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին: Ձեկուցման սկզբում կցանկանայի ներկայացնել մի քանի վիճակագրական տվյալներ, որոնք, ըստ իս, ամենաընդհանուր ձևով պատկերացում են տալիս վերջին 3 տարիների ընթացքում Գիտությունների ակադեմիայի ստացած արդյունքների մասին: Կարծում եմ, որ այդ տվյալները հետաքրքիր կլինեն բոլորի համար, նաև նրանց,

աղյուսակ 1

ՀՀ ԳԱՄ գիտական կազմակերպությունների կողմից 2003-2006 թթ. կատարված արտասահմանյան իրապարակումների և ստացված դրամաշնորհների և կնքված պայմանագրային աշխատանքների ընդհանուր քանակը


Ըստ տարիների	Արտասահմանյան հրապարակումների քիվը	Դրամաշնորհի-ների ընդհանուր բանակը	Դրամաշնորհների ընդհանուր գումարը ԱՄՆ դոլարներով	Պայմանագրային աշխատանքների ընդհանուր գումարը ԱՄՆ դոլարներով
2003 թ.	15 գիրք 766 հոդված	18	2 311 251	1 000 000
2004 թ.	12 գիրք 798 հոդված	17	1 889 350	1 200 000
2005 թ.	15 գիրք 823 հոդված	16	2 627 849	377 595
2006 թ.	15 գիրք 755 հոդված	15	1 460 041	500 000
Ընդամենը	15 գիրք 3142 հոդված	66	8 288 491	3 077 595

ովքեր չեն տեսնում կամ չեն ցանկանում տեսնել այդ արդյունքները:

Այս աղյուսակի արաջին սյունակում, դուք տեսնում եք վերջին 3-4 տարիներին (2003-2006 թթ.) Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի ինստիտուտների արտասահմանյան հրապարակումների թիվը և դրամաշնորհների ընդհանուր քանակը: Նախավերջին սյունակում տրված են դրամաշնորհներից ստացված գումարները ԱՄՆ դոլարներով, իսկ վերջին սյունակը ցույց է տալիս այն պայմանագրային աշխատանքների ծավալները, որոնք, ըստ էության, գիտական արդյունքների ներդրումն են տարբեր ճյուղերում: Վելացնենք, որ թվային իմաստով ամենամեծ դրամաշնորհը, որը վերջին 10 տարիների ընթացքում գործում է Հայաստանում, ստացվել է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջոցով: Վերջին 10 տարիների ընթացքում ներկայացված է եղել 120 հայտ՝ որից 40-ը ստացել է Գիտությունների ակադեմիան՝ 10 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր օգնությամբ, իսկ ուրիշ օրակարգներ:

աղյուսակ 2

Դրամաշնորհների դինամիկան (2003-2005 թթ.)
ըստ գերատեսչությունների




ընդհանուր գումարը կազմել է 30 միլիոն ԱՄՆ դոլար, այսինքն՝
ամբողջ գրանտների ընդհանուր թվի մեկ երրորդը:

Երկրորդ աղյուսակում ներկայացված են ընդհանրապես բոլոր

աղյուսակ 3

Գիտության ֆինանսավորման ծավալները
մի շարք անգումային երկրներում




սիպի դրամաշնորհները, որոնք ստացվել են հանրապետությունում, այդ թվում՝ Գիտությունների ազգային ակադեմիայում:

3-րդ աղյուսակում բերված են գիտության ֆինանսավորման ծավալները մի շարք անցումային երկրներում: Հայաստանի Հանրապետության ամբողջ ֆինանսավորումը 12 մլն Եվրո է: Կուզեի հատկապես շեշտել Էստոնիային, որի բնակչության թիվը, կարծես, Հայաստանի բնակչության թվի կեսն է: Այս հանրապետությունը, փաստորեն, գիտությանը հատկացնում է 83 մլն Եվրոյի չափով

աղյուսակ 4

Բիզնեսի բաժինը ֆինանսավորման մեջ



ֆինանսավորում: Ինչպես երևում է աղյուսակից, այն երկրները, որոնք զարգացած տնտեսություն ունեն, նրանք բիզնեսից և մեդդ-րումենթից եկած միջոցները անհամեմատ շատ են: Օրինակ, շատ արագ զարգացող երկրում՝ Չինաստանում, այդ թիվը 60 տոկոս է, Սլովակիայում՝ 59 տոկոս: Այս աղյուսակում չկա, օրինակ, Ֆին-լանդիան, որը գիտությանը հատկացնում է 5 միլիարդ դոլար, որի 70 տոկոսը գալիս է բիզնեսից: Իսկ այն երկրները, որոնք անցու-մային շրջանը դեռևս լիարժեքորեն չեն անցել և որոնց տնտեսու-թյունը բարձր մակարդակի վրա չէ, գիտության ֆինանսավորման համար տնտեսությունից եկած բաժինը համեմատաբար ցածր է: Օրինակ՝ Հունգարիան 16 տոկոս է, Լիտվան 19 տոկոս , Ռումի-նիան 26 տոկոս: Մեզ մոտ այն կազմում է 10 տոկոս: Այն գալիս է ոչ թե բիզնեսից, այլ պայմանագրային աշխատանքներից: Դրանք ոչ թե Հայաստանի տնտեսությունից, այլ արտասահմանյան երկր-ներից եկած ֆինանսներ են: Հետևաբար, մեր խնդիրներից մեկը պետք է հանդիսանա մեր գիտության արդյունքները մեր տնտե-սության մեջ ներդնելը, որովհետև միայն դա է ֆինանսական ամե-նակարևոր և հիմնական աղբյուրներից մեկը, որը կարող է մոտա-կա տարիներին հնարավորություն տալ ապահովելու գիտության ֆինանսավորումը միակզգույն չափերով: Սպասել, թե պետա-կան բյուջեից մենք շուտափույթ մի քանի անգամ շատ կա-

3


ՀՀ ԳԱՍ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱԴԱՐՀԻՆ

2

աղյուսակ 5

Ֆիզիկայի բնագավառում աշխարհի ամենահեղինակավոր 8 ամսագրերում 2000-2006 թթ. տպված հոդվածների թիվը



րող ենք ստանալ ֆինանսավորում, չնայած այդ հարցը գիտության հայեցակարգում նշված է, հնարավոր չէ: Չնայած Գիտությունների ակադեմիայի հիմնական խնդիրը հիմնարար գիտությունները զարգացնելն է, սակայն հայտնի է, որ մեծ մասնակցությունը ավելի արժեքավորվում են, երբ ստացված արդյունքները կիրառություն են գտնում կյանքի տարբեր ոլորտներում: Բերեն մաս որոշ կադրային տվյալներ:

Առ 1-ը հունվարի 1991 թ. ակադեմիայի համակարգում աշխատել են 8 633 հոգի, գիտաշխատողներ՝ 3 040, որոնցից գիտության դոկտորներ՝ 272, գիտության թեկնածուներ՝ 1405: Առ 1-ը հունվարի 2007 թ. մեր աշխատողների ընդհանուր թիվը կազմում է 3731, այսինքն՝ երկու անգամ ավելի պակաս: Գիտաշխատողների թիվը կազմում է 2171, որոնցից գիտության դոկտորներ՝ 330, գիտության թեկնածուներ՝ 1019:

Կցանկանալի ևս մեկ գիտական ճյուղի վերաբերյալ համեմատություններ անել և դրանով ավարտել իմ ելույթի այս մասը: Աղյուսակում բերված է ֆիզիկայի բնագավառում աշխարհի ամենահեղինակավոր 8 ամսագրերում 2000-2006 թթ. տպագրված հոդվածների թիվը: Դրանով ենք որոշում մեր գիտության մակարդակը: ԱՊՀ երկրների համար բերված տվյալների համաձայն, ինչպես տեսնում ենք, առաջին տեղում Ռուսաստանն է՝ 6247, հաջորդը Ուկրաինան է՝ 1137, իսկ երրորդը Հայաստանն է՝ 258: Հայտնի է, որ Վրաստանում ընդհանուր գիտության հատկացումները 4 անգամ, իսկ Ադրբեջանում 8 անգամ ավելի են, քան Հայաստանում:

Անդրադարձալի կիրառական խնդիրներին, ուզում են ասել հետևյալը. անցած տարվա ընթացքում ՀՀ մաթեմատիկայի կարգադրությամբ ստեղծված գերատեսչական հանձնաժողովը մշակեց Հայաստանում գիտության զարգացման հայեցակարգ, որտեղ որպես գիտության կարևորագույն խնդիր հիմնավորված է գիտելիքի վրա հիմնված տնտեսության զարգացումը: Այդ տրամաբանությամբ ՀՀ ԳԱՍ մաթեմատիկայումը նպատակահարմար գտավ այս տարեկան ժողովում ուշադրություն դարձնել մեր կառույցներում ստացված կիրառական բնույթի գիտական արդյունքներին, որոնք կարող են թիչ թե շատ արագորեն ներդրվել մեր տնտեսության տարբեր ճյուղերում: Իհարկե, ես ուզում եմ մաթօրոք ասել, որ մեր հիմնական գործունեությունը հիմնարար հետազոտություններ կատարելն է, և այդ ուղղությամբ հաշվետու տարում ստացվել են բավականաչափ լուրջ արդյունքներ, որոնք երկու տարբերակով՝ հակիրճ և մանրամասն, ներկայացված են հաշվետվության մեջ: Այժմ կցանկանալի նշել տարբեր ինստիտուտներում ստացված այն կիրառական արդյունքների մասին, որոնք կարող են նշանակություն ունենալ և կիրառվել մեր և այլ երկրների տնտեսության մեջ:

Մեխանիկայի ինստիտուտ. Առաջարկվում է սողանքային լանջերի կայունությունը սեյսմիկ ազդեցությունների դեպքում որոշելու նոր եղանակ, ըստ որի՝ նրանց կայունության հաշվարկը իրականացվում է ոչ թե տվյալ սեյսմիկ զոտում գործող սեյսմիկ տատանումների արագացումների հաշվառումով, այլ այդ արագացումների ազդեցության դեպքում որոշված գետնահողերի ամրության մեծություններով:

Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմներ.

րի ինստիտուտ. Ստեղծվել է ծրագրային համակարգ՝ աղծառված պատկերների՝ հատվածավորման առաջարկված եղանակով վերլուծության և վերականգնման համար: Կատարվել են աշխատանքներ Մատենադարանում պահվող որոշ աղծառված պատկերների վերականգնման համար: Ստացված արդյունքները ցուցադրվել են Digit Tech միջազգային ցուցահանդեսում (Երևան 2006):

Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ. Ինստիտուտում երկար տարիների ընթացքում կատարվում են բարձր մակարդակի հիմնարար գիտական ուսումնասիրություններ՝ բյուրեղների հատկությունների, նրանց ֆիզիկական և հիմնական հատկությունների բարելավման ուղղությամբ: Ուղղումելի կլինեն այդ ուսումնասիրությունների արդյունքում ունենալ բյուրեղներ՝ պրակտիկ կիրառությունների համար:

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ. Դեցիմետրական և սանտիմետրական ալիքի երկարության տիրույթներում մշակվել և ստեղծվել են մեկ կիլո-վատ հզորության իմպուլսային տրանզիստորային ուժեղարարներ, որոնք փոխարինել են ավանդական էլետրավակուումային սարքերին՝ տարբեր նշանակության համակարգերում:

Ա. Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ. Մշակվել են այդման ռեժիմում միկելի ու կոբալտի փոշիների ստացման տեխնոլոգիաներ: Ստացված փոշիները փորձարկվում են Երևանի «Ալմաստ» ՓԲԸ-ում:

Մ. Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ. Ստացվել են կիսահաղորդիչ ԻԿ տիրույթում թափանցիկ և բարձրաբեկող նոր բաղադրության ապակիներ, թափանցիկ ֆոտոսիտալներ՝ զգայուն ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ:

Մոլեկուլի կառույցի ուսումնասիրության կենտրոն. Լ-միտրոարգինինի նոր բյուրեղային տարատեսակը, նրա ստացման եղանակը: Նրա միաբյուրեղի աճեցման հատուկ եղանակը արտոնագրվել է և ներկայացվել է միջազգային հայտ՝ արտերկրում արտոնագրելու համար:

Կենդանաբանության ինստիտուտ. Կիրառվել և ներդրվել է կարտոֆիլի նեմատոդի դեմ պայքարի ինտեգրացած մեթոդ՝ «Բագուդին» և «Պրեստիժ» պրեպարատների օգտագործմամբ:

Միկրոբիոլոգիայի ինստիտուտ. Հայ-ֆրանսիական համագործակցության ծրագրով «Նիտրագին» փորձնական քանակները ուղարկվել են Ֆրանսիա /Դիժոն/ եգիպտացորենին, արևածաղկի և հլածուկի վրա փորձարկելու և արտոնագիր ստանալու նպատակով:

Մանրէների ավանդադրման հանրապետական կենտրոն. Սանկտ-Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի հետ մշակվել են օսլա պարունակող նյութերի վերամշակումից սննդային կաթնաթթու ստանալու տեխնոլոգիական պրոցեսը և բիզնես-պլանի ելակետային տվյալները:

Հ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ. Մշակվել է պատրաստուկ, որը կարող է կիրառվել դաշտային պայմաններում գյուղգայի խայթելու դեպքում: Պատրաստուկը 4-5 անգամ թուլացնում է թույնի ազդեցությունը:

Հ. Մնջոյանի անվ. նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ. Մշակվել և ներդրվել է «Դիսիլին» մի շարք այլ դեղամիջոցների և լաբորատոր սինթեզներում օգտագործվող ռեակտիվ՝ մեթիլյոդիտի արտադրական ռեզլանմանը: Մշակված է քիամիքրոմիդի հիդրոլորի-դի ստացման քիմիական եղանակ:

Հր. Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ. Հաջողվել է անջատել պոլիպեպտիդային բնույթի նոր ներդրողներին մի խումբ, որոնք համարվում են պոտենցիալ հզոր գործոններ սիբիրիախտի բուժման և կանխարգելման համար:

Երկրաբանական գիտությունների ինստիտուտ. Ստացվել են 6 նոր տեսակի պոլիմերահանքային համակարգեր, որոնք փորձարկվում են: Հակաֆիլտրացիոն պատնեշների ստեղծման համար մշակվել է ավազատեսակների օգտագործման նոր տեխնոլոգիա: Այդ նպատակով սինթեզվել և ստացվել են պոլիմերահանքային կոմպոզիտների տարատեսակներ:

Պետք է ասեն, որ մյուս ինստիտուտներում էլ կան

պրակտիկ կիրառության համար որոշակի արդյունքներ, որոնք այս գեկուցման մեջ տեղ չեն գտել:

Հարգելի գործընկերներ, Գիտությունների ակադեմիայի կարևորագույն խնդիրներից մեկը հայագիտությունն է: Այս ասպարեզում ունենք որոշակի հաջողություններ:

Հաշվետու տարում հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտները հրատարակել են մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ:

Պատմության ինստիտուտը հրատարակել է «Հայ պարբերական մամուլի պատմություն /18-19 դդ./» ընդհանրացնող աշխատության առաջին հատորը, որում ընդգրկված է ինչպես Արևելյան և Արևմտյան Հայաստանի, այնպես էլ հայկական գաղթավայրերի մամուլի պատմությունը:

Արևելագիտության ինստիտուտը հրատարակել է «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի 25-րդ պրակը և Ն.Հ.Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմության» 3-րդ հատորը:

Լույս է տեսել Գ.Պողոսյանի «Հայ հասարակությունը 21-րդ դարակազմին» մենագրությունը, որում տրվում է մեր օրերում Հայաստանում ընթացող վերափոխումների սոցիալական և քաղաքական արդյունքների ակադեմիական վերլուծությունը:

Մ.Քոբանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտը հրատարակել է Հ. Ավագյանի «Հայաստանի հանքային ջրերը» աշխատությունը, որում ցույց է տրվել, որ հանքային ջրերում կան այնպիսի տարրեր, որոնց կորզումը արդյունավետ կարող է լինել:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը հրատարակել է Ս. Հարությունյանի «Հայ հնայական ժողովրդական աղոթքներ» և արտասահմանում անգլերենով Լ. Աբրահամյանի «Հայկական ինքնությունը փոփոխվող աշխարհում» մենագրությունները:

Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտը հրատարակել է «Հայ վեպի պատմություն» կոլեկտիվ ուսումնասիրությունը, իսկ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտը՝ բառարանագրության վերաբերյալ 2 աշխատություն:

Արվեստի ինստիտուտը ձեռնարկել է «Հայ արվեստի հարցեր» մատենաշարը, որի անդրանիկ հատորը լույս է տեսել հաշվետու տարում:

Հայագիտության բնագավառում խիստ կարևորվում է պետական պատվերների կատարումը: «Հայ ժողովրդի պատմություն» քառահատորյակը պետք է ավարտվեր հաշվետու տարում, սակայն դա տեղի չունեցավ: Հանրապետության կարող ուժերի միջոցով իրականացվող մեր ժողովրդի ամբողջական պատմության նորովի ներկայացումը հույժ կարևոր է և անհրաժեշտ է գիտական-ակադեմիական բարձր մակարդակով այն ավարտել այս տարի: Նույնը պետք է ասել Արևելագիտության ինստիտուտին համեմատարկված «Հայաստանի հարակից երկրների պատմություն» բազմահատոր աշխատության մասին:

Շարունակվել են աշխատանքները բաժանմունքի ինստիտուտների տարբեր ուղղություններով ծրագրված թեմաների կատարման ուղղությամբ:

Այժմ թույլ տվեք անցնել գիտականակերպական գործունեությանը:

2006 թ. մայիսին տեղի ունեցան Ակադեմիայի նախագահության ընտրություններ: Ընդհանուր առմամբ մինչ այդ գոյություն ունեցող համակարգը չէր ծառայում իր հիմնական խնդրին՝ գիտականակերպական հարցերի լուծմանը գիտական բաժանմունքներում: Պետք է ասել, որ շատերը չեն պատկերացնում Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության դերը. եթե մեկ նախադասությամբ ասվի՝ Գիտությունների ակադեմիան իրականացնում է գիտության ասպարեզում քաղաքականության մշակում: Գիտությունների ակադեմիան է, որ իր հզոր մասնագիտական պոտենցիալով կարողանում է որոշել, թե որոնք են այն գիտական ուղղությունները, որ պետք է զարգանան, որոնք են այն արդյունքները, որ պետք է ստացվեն: Նախագահության չափազանց մեծ թվով կազմը չէր նպաստում խնդիրների լուծմանը: Բաժանմունքները մասնագիտական առումով չէին նպաստում առողջ գիտական մթնոլորտի ստեղծմանը և, հետևաբար, գիտական խնդիրների քննարկմանը: Բազմիցս խոսվել է այն

4

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

մասին, որ ակադեմիական հանրությունը չի մասնակցում նրա վարչական կազմի ձևավորմանը: Այստեղ պահանջվում են որոշակի օրենսդրական լուծումներ, մասնավորապես փոփոխություններ «Գիտության և գիտական բաղադրականության մասին» ՀՀ օրենքում, ԳԱԱ կանոնադրության մեջ: Պետք է ասել, որ մենք պատրաստ էինք կատարելու կանոնադրական փոփոխություններ մեր կանոնադրության մեջ, բայց բանի որ սպասվում են փոփոխություններ Օրենքի մեջ և այլ օրենսդրական նախաձեռնություններ՝ կապված հայեցակարգի մեջ արտահայտված դրույթների հետ, ապա իմաստ չուներ այդ փոփոխությունները կատարելը: Հուսով եմ, որ այդ օրենսդրական փոփոխություններն անելուց հետո մենք անմիջապես մեր կանոնադրության մեջ կկատարենք համապատասխան փոփոխություններ: Այս ամենը համահունչ է այն բարեփոխումներին, որոնք անհրաժեշտ էին իրականացնել ամբողջ համակարգում: Առաջին հերթին կրճատվեց փոխնախագահների թիվը՝ մնալով մեկը, էապես կրճատվեց նախագահության կազմը՝ բողոքվելով միայն 10 անգամ: Նորովի վերակառուցվում են բաժանմունքները: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բաժանմունքը տրոհվեց ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի, մաթեմատիկայի, մեխանիկայի և ինֆորմատիկայի բաժանմունքի: Տրոհվել է նաև բնական գիտությունների բաժանմունքը՝ Զինական և Երկրի մասին բաժանմունքի և Բնական գիտությունների բաժանմունքի: Վերանայվեց նախագահության ապարատի կառուցվածքը՝ համալրվելով նոր, խիստ անհրաժեշտ բաժիններով՝ ինովացիոն և միջազգային դրամաշնորհների ստորաբաժանումներով: Ընդհանուր առմամբ ապարատի կազմը կրճատվեց մոտ 20%-ով:

Ակադեմիայի համար ծանր խնդիր էր ՊՈԱԿ-ի մասին օրենքի պահանջների իրականացումը ինստիտուտների այն տնօրենների նկատմամբ, որոնց տարիքը 65-ից բարձր է: Այս դրույթը շատ անգամ էր քննարկվել, սակայն օրենքի պահանջը պետք է կատարվեր: Այսպիսով, մեզանից պահանջվում էր ընտրել 23 ինստիտուտների տնօրեններ: Պետք է ասել, որ այս ծանր խնդրի լուծումը կազմակերպվեց օրենքի տառին համապատասխան: Եղան դժվարին դեպքեր, երբ թափուր տեղի համար հավակնում էին մեկից ավելի թեկնածուներ: Ընտրությունները կատարվեցին բազմաստիճան քննարկումներից հետո: Պետք է ասել, որ փարատվեցին այն կասկածները, թե չի հաջողվի կատարել լիարժեք փոխարինում վաստակաշատ, մեծ փորձ ունեցող նախկին տնօրեններին: Այսօր կարող ենք փաստել, որ այդ դժվարին խնդիրը լուծվել է հաջողությամբ, և նոր տնօրենները բանիմաց, կոլեկտիվներում հարգանք վայելող հանրահայտ գիտնականներ են: Հուսով եմ, որ նրանք հաջողությամբ կշարունակեն ներկայացնել մեր ինստիտուտները հանրապետության և միջազգային գիտական շրջանակներում: Նախկին տնօրենները, որպես կանոն, նշանակվել են ներկայիս տնօրենների խորհրդականներ, և հուսով եմ, որ իրենց ունեցած հարուստ փորձով կաջակցեն նորընտիր տնօրեններին: Միաժամանակ, ափսոսանքով պետք է նշեմ, որ կան դեպքեր, երբ նշված համագործակցությունը չի ստացվում: Կարծում եմ, որ երկար տարիների ընթացքում ստեղծված կոլեկտիվների շահերը ավելի բարձր կդասվեն անձնական նեղ շահերից:

Հաշվետու տարում անցկացվեցին Ակադեմիայի թղթակից անդամների ընտրություններ (նախորդ ընտրությունները տեղի էին ունեցել 2000 թ.), որի արդյունքով Ակադեմիան համալրվեց 36 նոր թղթակից անդամով: Առաջին անգամ ընտրությունները անցան տարիքային տարբերակված ձևով՝ մինչև 51 տարեկան և 51-ից բարձր: Հայտարարված 38 տեղերի թիվը և մասնագիտությունների ցանկը առաջադրվել էին բաժանմունքների կողմից՝ հաշվի առնելով համապատասխան բնագավառում գործող գիտության դոկտորների թիվը, տարիքը և ավելի ուղղությամբ ակադեմիայի առկա անդամների թիվը: Քվեարկության արդյունքներով 2 տեղի համար՝ օրգանական քիմիա և ինֆորմատիկա մասնագիտություններով, ընտրություն չկատարվեց: Ընտրված բոլոր 36 թղթակից անդամները արժանի, հանրահայտ գիտնականներ են: Ընդհանուր առմամբ ընտրություններին մասնակցելու հայտ էին ներկայացրել 129 թեկնածուներ: Պետք է նշել, որ անց մոտ 80-90% արժանի,

շատ բարձր մակարդակի գիտնականներ էին և 38 տեղերի պայմաններում շատ արժանավորներ պետք է մրցույթից դուրս մնային:

Մամուլում և այլ միջոցներով ընտրությունների արդյունքների վերաբերյալ արտահայտվեցին որոշ դժգոհություններ: Պետք է ասել, որ ամեն մի ընտրության տրամաբանությունն է այդպիսին, կարող են ասել այն, որը ամեն ընտրությունից առաջ ասում էր մեր ուսուցիչը՝ Վիկտոր Համբարձումյանը. «Մեր բոլոր ընտրվածները շատ արժանի գիտնականներ են, բայց ափսոս, որ կային արժանիներ, որոնք չընտրվեցին»:

Գիտության ընդհանուր ծանր վիճակի պայմաններում բարեփոխումների և այլ միջոցառումների հիմքում պետք է ընկած լինի մեր ողջ ներուժի արդյունավետ օգտագործումը: Անցած երկու տասնամյակների ընթացքում չի քննարկվել գիտական ուղղությունների հարցը՝ նպատակ ունենալով հրաժարվել բազմաթեմայնությունից և հետազոտությունները կատարել կարևորագույն ուղղություններով: Անցած երկու տասնամյակների ընթացքում էապես նվազել է գիտության ֆինանսավորումը, աղքատացել է հետազոտությունների բազան, կրճատվել է հետազոտողների թիվը, տեղի է ունեցել մասնագետների արտահոսք: Այս պայմաններում նշված ժամանակահատվածում համակարգի հետազոտական միավորների թիվը փոքրանալու փոխարեն մեծացել է 10-ով: Բնական է, որ անհրաժեշտ էր նախ մանրամասն ուսումնասիրել համակարգի առկա վիճակը՝ գիտական, նյութա-տեխնիկական բազան և կադրային ապահովվածությունը, այնուհետև կատարել թվաքանակի օպտիմալացում: Այդ գործընթացը տևեց մոտ 2 տարի և վերջապես, կառավարության որոշմամբ որոշ օղակներ վերացվեցին կամ միավորվեցին, իսկ մնացի գիտական ուղղություններ ունեցող մի քանի ինստիտուտների հենքի վրա ստեղծվեցին գիտական կենտրոններ: Կենտրոններում ուժերի վերադրման շնորհիվ որոշակի ուղղություններով կարգապահ հիմնարար և կիրառական հետազոտություններ: Մեր կազմակերպություններում կան բազմաթիվ կիրառական նշանակության մշակումներ, որոնք կարող են ներդրվել տարբեր բնագավառներում: Ինստիտուտներում ուսումնասիրություններ են կատարվում նաև այդ ուղղությամբ: Կան նախնական պայմանավորվածություն մի շարք նախարարությունների հետ՝ կազմակերպել Ակադեմիայի նախագահության և նրանց միջև հանդիպումներ՝ նվիրված գիտական արդյունքների ներդրման քննարկմանը: Նկատի ունենալով, որ մեր ներքին շուկան շատ փոքր է, մեր մշակումների մեծ մասը պետք է կողմնորոշված լինի դեպի արտաքին շուկա: Արտաքին շուկայում արդյունքը վաճառելու նպատակով անհրաժեշտ է ունենալ արտոնագրեր արտաքին շուկայում: Արտոնագրերի ստացումը և շուկայում պահելը պահանջում են լրացուցիչ միջոցներ: Օրինակ՝ եվրոպական պատենտային գործակալության կողմից տրված արտոնագիրը ձևակերպելու համար անհրաժեշտ կլինի առնվազն 10-20 հազար ԱՄՆ դոլար, իսկ շուկայում մինչև 5 տարի պահելու համար՝ տարեկան 2-3 հազար ԱՄՆ դոլար: Բնական է, որ այսօր մենք չունենք այդ միջոցները և այդ պատճառով ունենք քիչ թվով արտոնագրեր և վաճառված արտոնագրեր: Խնդրի լուծումներից մեկն այն է, որ, եթե պետությունը հատկացներ գումարները այդ նպատակով, հեղինակները կարող էին կնքել պայմանագիր՝ ապագայում այդ գումարները վերադարձնելու պայմանով:

Հարգելի՛ գործընկերներ,

Բարեփոխումների ընթացքը շարունակելու և մեր համակարգի գիտահետազոտական հիմնարկներում իրական պատկերը պարզելու նպատակով բաժանմունքների կողմից մշակվեց մի հարցաշար, որը ներառում էր գիտական հիմնարկի գործունեության բոլոր կողմերը: Հարցաշարը տրամադրվեց ինստիտուտների տնօրեններին: Ներկայացված տեղեկանքը պետք է տար կազմակերպության ամբողջ պատկերը: Այնուհետև նախագահությունը հաստատեց հանձնաժողովներ, որոնց կազմում, որպես կանոն, ներգրավված էին ԳԱԱ համակարգից դուրս կազմակերպություններում և ակադեմիայի համակարգում աշխատող ԳԱԱ անդամներ: Այդ աշխատանքը արդեն ավարտվել է, և ունենք առաջին արդյունքները:

Ընդհանուր վիճակը բնութագրվում է.

ա/ Թերֆինանսավորմամբ. եթե մեր հանրապետության ամբողջ գիտության ֆինանսավորումը համեմատենք մեր մասն անցումային շրջան ապրող երկրների հետ, ապա պարզվում է, որ մենք ամենաքիչ ֆինանսավորվող երկիրն ենք:

բ/ Գիտության ամբողջ ինֆրակառուցվածքի, հատկապես բազայի նյութական և բարոյական մշակվածություն. անշարժ գույքի՝ շենքերի և շինությունների անմխիթար վիճակ, որտեղ ավելի քան 15 տարի վերանորոգումներ չեն արվել: Այսօր՝ 2007 թ., մի շարք ինստիտուտներ ընդհանրապես ծնունդ անմխիթարին չեն աշխատում ջեռուցման բացակայության պատճառով: Դրանցից մի քանիսն ունեն ջեռուցման համակարգ, կաքսայատուն, բայց չեն ջեռուցվում գազի վճարման համար գումարների բացակայության պատճառով: Օրինակ՝ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը, որը ամենաշատ ֆինանսավորվող ինստիտուտներից է: Բոլոր այն կազմակերպությունների, որոնք ծնունդ չընդունում չեն աշխատել, տնօրեններից պահանջում ենք ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի 2007թ. ծնունդը չաշխատող հիմնարկ չունենանք: Դրա համար, բացի բյուջեի գումարներից, հիմնարկը ինքը պետք է կարողանա ստեղծել արտաբյուջետային միջոցներ: Դրա օրինակը ունենք. Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների ինստիտուտը, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտը և այլն:

գ/ Որպես կանոն, հեռանալ, հին սարքավորում

Այս ուղղությամբ, շնորհիվ միջազգային դրամաշնորհների, որոշ լաբորատորիաներ հնարավոր է եղել վերազինել նոր սարքավորումներով: Դա ՆԱՏՕ-ի ծրագրերն են և մեզ հայտնի այլ ծրագրեր:

դ/ Կադրային խնդիրներ

Էապես պակասել է համակարգի կազմակերպությունների աշխատողների թվաքանակը՝ մոտ երկու անգամ: Մեր հիմնարկները դանդաղ են համալրվում երիտասարդ գիտնականներով: Երիտասարդությունը չի գալիս դեպի գիտություն: Այստեղ մեղավոր են նաև մեր հիմնարկների ղեկավարները, որոնք ուռճացնում են ինստիտուտի անձնակազմը համատեղություններով, փոխանակ ընդունեն երիտասարդ գիտնականների: Այստեղ պետք է նշեմ մի ավելի վատ երևույթ՝ գիտական աշխատանքի նկատմամբ համընդհանուր հետաքրքրության նվազումը և գիտական աշխատողի վարկի շատ ցածր մակարդակը:

Շուկեյում համար մենք առաջին հերթին պետք է ստեղծենք գրավիչ պայմաններ երիտասարդության համար, իսկ պետությունը մշակի համալիր ծրագիր՝ կադրերի սերնդափոխությունն ապահովելու նպատակով: Հատկապես մեծ նշանակություն ունի արտասահմանում կադրեր պատրաստելու հարցը: Նույնիսկ երբ սոցիալ-տնտեսական վիճակը բավականին լավ էր, միևնույն է, արտասահմանում կադրերի պատրաստմանը մեծ նշանակություն էր տրվում:

Անշարժ գույքի անմխիթար վիճակը շուկեյում համար կա մի ճանապարհ. քանի որ այսօր թվաքանակի կրկնակի պակասելը, հետազոտությունների ծավալի նվազելը ինստիտուտներում առաջացրել են տարածքների ավելցուկ, ապա կառավարությունը կարող էր թույլատրել այդ մասնաշենքերը վաճառել և ստեղծել գիտության հիմնադրամ՝ այն օգտագործելով մնացած շենքերում նորմալ աշխատանքային պայմաններ ստեղծելու համար: Այդպիսի ավելցուկներ կան Աշտարակում, Արթվյանում և Երևանում տեղակայված ինստիտուտներում:

Հարգելի՛ գործընկերներ, հրատարակչական գործունեությունը մեր աշխատանքի կարևոր բանաձևերից մեկն է: Ինչպես բոլոր բնագավառներում, այս ուղղությամբ ևս մենք ունենք լուրջ դժվարություններ: Պետական բյուջեով մեզ հատկացված միջոցները շատ անգամ փոքր են այն միջինալ պահանջարկից, որը անհրաժեշտ է մեր ամսագրերի և գրքերի տպագրության համար: Այդ պատճառով մի քանի ամսագրեր տպագրվում են ԲՈՒՀ-երի աջակցությամբ: Օրինակ՝ «Տեխնիկական գիտություններ» ամսագիրը տպագրվում է Ճարտարագիտական համալսարանի օգնությամբ, «Բժշկագիտական հանդեսը»՝ Բժշկական համալսարանի աջակցությամբ և այլն: Տպագրության համար պատրաստ շատ գրքեր հնարավոր չի լինում ժամանակին տպագրել: Նշելով առկա դժվարությունները՝ պետք

ՀՀ ԳԱՍ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

➤ Ենա՞նք, որ մեր անելիքները ևս շատ են: Այսօր այդ բնագավառի երկու բաղադրիչ մասերի կարգավիճակը չի նպաստում ընդհանուր վիճակի բարելավմանը: Անհրաժեշտ է կազմակերպել հրատարակչական գործի շահագրգիռ բնակարաններ: Քննարկումներից հետո անհրաժեշտ է վերանայել բոլոր ամսագրերի խմբագրակազմերը, ճշտել հրատարակչության և տպարանի կարգավիճակը, նրանց ֆունկցիոնալ կապը:

Միջազգային գիտատեխնիկական համագործակցություն

ՀՀ ԳԱՍ գիտական հաստատությունները շարունակել են ակտիվորեն մասնակցել միջազգային գիտական կենտրոնների և հիմնադրամների կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերին, կապեր հաստատել արտերկրների գիտական հաստատությունների հետ:

ՀՀ ԳԱՍ համակարգում Եվրախորհրդի ամսական աջակցությամբ գործում է Եվրամիության գիտական և տեխնոլոգիական զարգացման VII շրջանակային ծրագրի Ազգային տեղեկատվական կենտրոնը, որի նպատակն է աջակցել մեր համակարգի աշխատողների ակտիվ մասնակցությունը այդ ծրագրին:

ՀՀ ԳԱՍ կազմակերպությունները ակտիվ մասնակցություն են ունեցել ՆԱՏՕ-ի տարբեր ծրագրերին, որոնք հնարավորություն են տվել մասնակիորեն ֆարմացնել վործարարական հետազոտությունների բազան: Այժմ մեր աշխատակիցները մասնակցություն են ցուցաբերում «Գիտությունը ի նպաստ խաղաղության և անվտանգության» ծրագրին, որի շրջանակներում կազմակերպվել են սեմինարներ և ներկայացվել նոր մատակարար:

Տարեցտարի ավելանում են ՄԳՏԿ-ի և ԻՆՏԱՄ-ի կողմից արամադրված դրամաշնորհները: Պետք է նաև նշել, որ ԻՆՏԱՄ ծրագիրը չի գործելու 2007 թվականից, բացի այն ծրագրերից, որոնք ունեն տարածաշրջանային բնույթ և գործելու են 2007թ.: Բացի նշված ծրագրերից՝ մեր գիտնականները դիմում և ստանում են անհատական դրամաշնորհներ: Տարբեր դրամաշնորհների մասին ամփոփ տեղեկություններ կտրվեն ակադեմիկոս-քարտուղարի զեկուցման մեջ:

Միջազգային համագործակցության կարևոր բաղադրիչ է տարբեր բնույթի գիտաժողովներին, սեմինարներին և այլ միջոցառումներին մեր գիտնականների մասնակցությունը: 2006թ. արտասահմանյան երկրներ են գործուղվել ՀՀ ԳԱՍ 262 գիտնական, այդ թվում՝ գիտական միջոցառումներին մասնակցելու՝ 121, համատեղ աշխատանք կատարելու՝ 96, բանակցություններ վարելու և կոնսուլտացիաների համար՝ 45 գիտաշխատող: Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի հետ համագործակցության պայմանագրի շրջանակներում ԳԱՍ 25 գիտնականներ այցելել են ՌԳԱ կենտրոններ՝ վերապատրաստում անցնելու և համատեղ հետազոտություններ կատարելու նպատակով:

Խրախուսանքի է արժանի Կենդանաբանության ինստիտուտի համագործակցությունը ՌԳԱ համապատասխան ինստիտուտի հետ, որի ընթացքում իրականաց-

վում են համատեղ գիտական մշակումներ, որոնց ֆինանսավորումը իրականացվում է ՌԳԱ-ի կողմից: Եթե նախկինում այդ համագործակցությունը իրականացվում էր միայն ինստիտուտների մակարդակով, ապա այս տարի նրանք պաշտոնապես ընդգրկվել են ՌԳԱ-ի միջազգային ծրագրերի մեջ և էապես ավելացել է ֆինանսավորումը:

Ռուսաստանում Հայաստանի տարվա շրջանակներում դեկտեմբերի 21-ից 23-ը Մոսկվայում տեղի ունեցավ ՀՀ ԳԱՍ և ՌԳԱ նախագահությունների համատեղ նիստ, որի ընթացքում ստորագրվեց բնական և հումանիտար գիտությունների ոլորտում համատեղ համագործակցության թեմաների փաթեթը:

Տեղեկատվական ապահովվածության մասին

Ավելորդ է բացատրություններ տալ տեղեկատվական ապահովվածության մասին, որը գիտատեխնիկական մշակումների շատ կարևոր բաղադրիչ մասն է կազմում: Այստեղ էապես աճել է համակարգի գրադարանների դերը թե՛ տպագիր, և թե՛ էլեկտրոնային տեղեկատվության ասպարեզում: Այս բնագավառում նոր տեխնոլոգիաների ապահովվածության պայմաններում էապես հեշտանում է հետազոտողի աշխատանքը:

Համակարգի գիտական հիմնարար գրադարանը կատարում է որոշակի աշխատանքներ թե՛ տպագիր և թե՛ էլեկտրոնային ինֆորմացիայի ուղղությամբ: Համակարգի գրադարանների վիճակը շատ ծանր է: Նրանք այսօր չունեն նորմալ աշխատանքային պայմաններ, գրեթե զրկված են նոր գրականությանը, անհրաժեշտ պարբերականներին բաժանորդագրվելու հնարավորությունից: Շատ գրադարաններում չկա ինտերնետին միանալու հնարավորություն՝ համակարգիչ չունենալու պարտադրով:

Վերջին շրջանում հիմնարար գրադարանի տնօրենը, որը հմուտ մասնագետ է էլեկտրոնային տեղեկատվության ասպարեզում, զեկուցումներով հանդես է գալիս ինստիտուտներում և աշխատողներին ծանոթացնում այդ ուղղությամբ մեր հնարավորությունների հետ:

Ակադեմիական ինտերնետային ցանցը ապահովում է համակարգի ինստիտուտների միջև կապը: Շատ կարևոր է, որ մեր ինստիտուտները պարտադիր ունենան ինտերնետային կայք: Որոշ ինստիտուտներ այդ աշխատանքը լավ են կատարել: Հատուկ պետք է հետևենք, որ այդ աշխատանքը ավարտվի մինչև սեպտեմբեր: Պետք է վերանայվի նաև Ակադեմիայի կայքը և այն ամբողջատ քարտեզի մեր նյութերով՝ կապված մեր առօրյա գործունեության հետ: Ինստիտուտների տնօրենները պետք է աշխատեն, որ հնարավոր մեծ թվով աշխատողներ օգտվեն էլեկտրոնային տարբեր բնույթի ինֆորմացիոն ծառայություններից:

Վերջում կցանկանալի անդրադառնալ Ակադեմիայի և բուհական համակարգի համագործակցության հարցին:

Գիտության զարգացման գործընթացում կարևոր նշանակություն է տրվում բուհական կրթության և Գիտությունների ակադեմիայի բազմակողմանի կապերին: Այսօր դեռևս պահպանվում է ԳԱՍ համակարգի բարձր

որակավորման կադրերի ներգրավվածությունը ուսուցման պրոցեսում, բայց համարյա գոյություն չունեն նախկինում հաջող գործող համատեղ ստորաբաժանումներ (ամբիոններ): Գիտության զարգացման հայեցակարգում կարևորվում է գիտատեսական կենտրոնների ստեղծումը: Սկզբնական փուլում այն կարելի է կատարել բովանդակային առումով, այսինքն՝ ստեղծվեն կառույցներ գիտական պրոբլեմների շուրջ՝ անկախ նրանց գերատեսչական պատկանելիությունից: Կարևորը այն է, որ ցանկացած կառույց խրախուսի համատեղ գիտական մշակումները, օգտագործելով բուհական և ակադեմիական հետազոտական բազան: Այս բնույթի աշխատանքներում պետք է ներգրավված լինեն նաև բարձր կուրսերի ուսանողները և ասպիրանտները: Այս առումով ակտիվ աշխատանքներ են տարվում Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում (ԵՊՀ հետ), Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում (ԵՊՀ հետ), Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում /Սլավոնական համալսարանի հետ/, Բյուրականի աստղադիտարանում (ԵՊՀ հետ) և այլն: Այստեղ կան որոշ դժվարություններ՝ կապված ուսանողների տեղափոխման հետ: Նախկինում, երբ ինստիտուտներն ունեին հնարավորություններ, իրենց տրանսպորտով էին տեղափոխում ուսանողներին: Այսօր, կարծում են, մեր բուհերը ի վիճակի են տրամադրելու տրանսպորտ՝ ուսանողներին գոնե շաբաթը մեկ անգամ այդ ինստիտուտներ տեղափոխելու համար, կատարեն համատեղ և՛ գիտական, և՛ ուսումնական աշխատանքներ:

Ավարտելով զեկուցումս՝ ճիշտ չէր լինի, եթե չանդրադառնայի սոցիալական խնդիրներին: Նախորդ տարում որոշում ընդունվեց մեր աշխատավարձի բարձրացման վերաբերյալ, որի համար մենք շնորհակալ ենք, բայց, ցավոք սրտի, այն արվեց մասնակիորեն՝ միայն բազային ֆինանսավորման ուղղությամբ կատարվեց աշխատավարձի բարձրացում, իսկ թեմատիկ ֆինանսավորման աշխատանքներին մասնակցող աշխատողների աշխատավարձի բարձրացում տեղի չունեցավ: Հույս ունենանք, որ հաջորդ տարում դա ևս կիրառվի: Ոգում են ասել, պարոն Վարչապետ, որ մեր աշխատավարձը շատ ցածր է. հանրապետությունում միջին աշխատավարձը 70 հազար դրամ է, եթե չեն սխալվում, իսկ մեր գիտության դոկտորի միջինացված աշխատավարձը 40 հազարից չի բարձրանում. այսինքն դոկտորի աշխատավարձը հանրապետության միջինից երկու անգամ ցածր է: Սա անընդունելի է: Իհարկե, մեր աշխատավարձի մի մասը պետք է լինի մեր աշխատած գումարներում, կան ինստիտուտներ, որտեղ այդ խնդիրը լուծվում է, միգուցե ոչ ամբողջ ինստիտուտի մակարդակով, բայց որոշակի ստորաբաժանումներում արվում է:

Այդ խնդիրներից է նաև ԳԱՍ Աղվերանի Գիտաժողովների տան խնդիրը, անցյալ և այս տարվա ընթացքում որոշ վերանորոգման աշխատանքներ են կատարվում: Հույսով են, այս տարի աշխատանքները կավարտվեն, և մենք կկարողանանք մեր գիտաժողովները, միջոցառումները անցկացնել այնտեղ:

Շնորհակալություն, ուշադրության համար:

2005 թվականի հունվարի 29-ին, Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով, որին մասնակցում էր շուրջ 5000 ներկայացուցիչ. այն նվիրված էր զարգացման միտումներին և հեռանկարներին: Գիտաժողովը կազմակերպել էր Նորբելյան մրցանակի դափնեկիր ժող Սարամաջոն: Գիտաժողովը քննարկեց զարգացման հեռանկարների միտումները, հարց, որի ուսումնասիրությունը կատարվել էր Կենտրոնական Աֆրիկայի հանրապետությունում: Գիտաժողովը նշեց այն միտումները, որոնք բնորոշելու են մայրցամաքի առաջիկա զարգացումները՝ արդյունաբերական զարգացում, գյուղատնտեսության զարգացման համար նոր հողերի յուրացում, ոռոգման ցանցի կատարելագործում, պայքար հիվանդությունների դեմ և առողջապահական համապարփակ ծրագրի կենսագործում:

Համաժողովը գրավեց միջազգային հանրության ուշադրությունը, բանգի առաջինն էր, որ սև մայրցամաքի զարգացման հեռանկարները դիտարկում էր գիտական տեսակետից:



«Սառը լուսաբան»՝ Տարիներին Սիսականի գործունեությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ում ոգեկոչված էր երկրների խաղաղ գոյակցության գաղափարով: Նորայր Սիսականը համոզված էր, որ գիտությունը լուսավորում է յուրաքանչյուրին, որ համագործակցությունը միավորում է մարդկանց և ազգերին: Նրանք, ովքեր համաձայն են լուծում հիմնախնդիրները, երբեք չեն ստանի միմյանց: Զբաղվելով Տիեզերական բժշկությամբ և կենսաբանությամբ՝ նա երկրագնդի առաջին բնակիչն էր, ով Երկիր մոլորակը համարում էր խաղաղ և սիրով պարզ ազգերի միակ Մեծ հայրենիք-սունը:

**ԿՈՒՇԻՐՈ ՄԱՅՈՒՐԱ
ՅՈՒՆԵՍԿՕ-ի
գլխավոր փնտրեն**

րիներին Ն. Մ. Սիսականին հաջողվեց մշակել վիտամինների պահպանության բանաբանները և կարտոֆիլի չորացման մոդերնացիան: Դա ծանրակշիռ ներդրում էր հաղթանակի ընդհանուր գործին: Նորայր Սիսականի լաբորատորիայում ստեղծվեցին նոր տվյալներ՝ բոլորալսատների քիմիական բաղադրության վերաբերյալ և հայտնաբերվեցին բազմա-



գերի մշակման ուղղությամբ: Իրականացնելով տիեզերագնացության համար այդ հսկայածավալ և կարևոր աշխատանքների ղեկավարությունը՝ Սիսականն արդեն այն ժամանակ ստեղծեց տիեզերական հեռախոսի թռիչքի վերադարձող տարրեր ֆիզիկոսների կողմից մակարդակի բազմաթիվ օրգանիզմների վրա կենսաբանական հետազոտությունների ընդարձակ ծրագիր: Այսպես էր սկիզբ դրվում տիեզերական կենսաբանությանը և բժշկությանը՝ մարդու համար ճանապարհի բացելով դեպի տիեզերք:

Այն ժամանակ չափազանց կարևոր էր գնահատել մարդու օրգանիզմի վրա տարբեր իոնիզացիոն ճառագայթումների վնասակար ազդեցության աստիճանը և գտնել ռիսկի աստիճանը նվազեցնող միջոցներ: Նորայր Սիսականի նախաձեռնությամբ անց էին կացվում տիեզերական կենսաբանության հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովներ և ԽՍՀՄ ԳԱ կենսաբանական գիտությունների բաժանմունքի նստաշրջաններ, որոնց թվում տիեզերական կենսաբանության գծով Միջազգային կենսաքիմիական կոնգրեսի շրջանակներում Միջազգային սինպոզիումը (Մոսկվա, 1961 թ.) և Միջազգային գիտաժողովը՝ նվիրված «Մարդը տիեզերքում» հիմնախնդրին (ՅՈՒՆ-

յանի մարդկային հատկանիշներին, ապա ըստ նրա աշակերտուհու՝ կենսաբանական գիտությունների դոկտոր Ի. Ի. Ֆիլիպովիչի հիշողությունների՝ անգամ տարիներ անց չի կարելի մոռանալ, թե «նա ինչպիսի ուժեղ, տաղանդավոր և հմայիչ անձնավորություն էր, ինչ լրջությամբ և պատասխանատվությամբ էր վերաբերվում գիտությանը և կյանքին, ինչպիսի ուշադիր ուսուցիչ էր, որքան բարյացակամ և միևնույն ժամանակ՝ պահանջկոտ ու խիստ էր»: Գիտությանը նվիրվածության ոգին պահպանվում էր նաև Սիսականի ընտանիքում, քանզի նրա կինը՝ Վարվարա Պետրովնան, մասնագիտությամբ ագրոքիմիկոս էր: Ընտանիքում տիրող գիտական մթնոլորտը կանխորոշեց նրա գավակների կյանքի ուղին. դոկտորը՝ Լյուդմիլան, դարձավ բանասիրական գիտությունների դոկտոր, ավագ որդին՝ Հովսեփը՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, կրտսեր որդին՝ Ալեքսը՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, Ռ.Գ.Ա. թղթակից-անդամ:

Ակադեմիկոս Ն. Մ. Սիսականի գիտական ժառանգությունը (1966 թ. մարտի 12-ին կյանքից նրա հեռանալուց հետո) իր զարգացումն է ստանում նրա հիշատակին նվիրված միջազգային գի-

Անատոլի ԳՐԻԳՈՐԵՎ, ՌԴ սկսադեմիկոս

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՇԱԿՈՒՄԸ

Ակադեմիկոս Նորայր Սիսականի ծննդյան 100-ամյակի առթիվ

Ականավոր կենսաքիմիկոս, տիեզերական կենսաբանության հիմնադիրներից մեկը՝ Նորայր Մարտիրոսի Սիսականը, ծնվել է 1907-ին, Աշտարակում:

Սիսականների տոհմը, ըստ ընտանեկան ավանդության, սերում է Սյունյաց իշխաններից: Նորայրը վաղ է գրկվել մորից, երբ տղան ընդամենը 12 տարեկան էր: 1928 թ. նա ընդունվում է Երևանի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը: Ուսման ընթացքում ցուցաբերած հաջողությունների համար նա ուղարկվում է Լենինգրադի գյուղատնտեսական ինստիտուտ, այնուհետև տեղափոխվում Մոսկվա՝ Տեմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիա:

1932 թվականին ակադեմիայի շրջանավարտ Սիսականն ընդունվում է Պարաբուսանյութերի, ագրոտեխնոլոգիայի և ագրոտեխնիկայի համամիութենական ինստիտուտի ասպիրանտուրա: Նրա գիտական ղեկավարն էր ականավոր ագրոքիմիկոս, ակադեմիկոս Դ. Ն. Պրյանիշնիկովը: Բարձր գնահատելով ասպիրանտի գիտելիքներն ու համառությունը՝ նա սկսեց հետազոտողին երաշխավորում է իր գործընկեր, ականավոր գիտնական-կենսաքիմիկոս, ակադեմիկոս Ա. Ն. Բախին: 1936 թ. Նորայր Սիսականը պաշտպանում է «Շաքարի ճակնդեղում ֆոսֆորի դերը շաքարակուտակման գործընթացում» թեմայով բեկնածուական ատենախոսությունը: Դա առաջին ատենախոսական պաշտպանությունն էր Ա. Ն. Բախի նորաստեղծ կենսաքիմիայի ինստիտուտում: 1940 թ. նույն ինստիտուտում կայացավ նաև Սիսականի դոկտորական ատենախոսության պաշտպանությունը՝ «Բույսերի երաշխադիմացկունության կենսաքիմիական բնութագիրը» թեմայով: Ֆիզիոլոգիա-կենսաքիմիական աշխատանքները հեղինակին բերեցին լայն ճանաչում:

Հայրենական Մեծ պատերազմի տա-

րիվ ֆերմենտներ, որոնք մասնակցում են կենսաքիմիական տարբեր գործընթացներին, այդ թվում՝ լուսասինթեզի հետ ամֆիլակառուցման առնչություն չունեցող: Դա հիմք հանդիսացավ բոլորալսատների՝ որպես բջջի բազմաֆունկցիոնալ կառուցվածքների մասին բացարձակապես նոր պատկերացման կազմավորման համար: Սիսականի ստացած տվյալները կանխորոշեցին ոչ միայն սեփական գիտական գործունեության հետագա ուղղությունը, այլ նաև նրա աշակերտների հետազոտական ուղին:

Լայն ճանաչում է վայելում բույսերում ընթացող կենսաքիմիական գործընթացների վրա ճառագայթման ազդեցության հետազոտմանը նվիրված Նորայր Սիսականի աշխատանքների շարքը: Գիտնականի հետաքրքրություններն այս ոլորտում նույնպես կենտրոնացած էին նուկլեինաթթուների և սպիտակուցների վրա. պարզվել էր, որ ճառագայթումը խիստ ազդում է կենդանի բջջում էնզիմատիկ գործընթացների փոխադարձ կապի վրա: Իր ուսումնասիրության արդյունքները Նորայր Սիսականը ներկայացրեց ատոմային էներգիայի խաղաղ օգտագործմանը նվիրված Ժնևյան առաջին գիտաժողովում (1955 թ.): Հետագայում նրա տեսակետները իրենց հաստատումը գտան մի շարք այլ լաբորատորիաներում:

Նորայր Սիսականը իր ներդրումն ունեցավ բնագիտության բացառիկ նոր բնագավառի՝ տիեզերական կենսաբանության և բժշկության կայացման և զարգացման գործում: Նրա ղեկավարությամբ ուսումնասիրվում էր տիեզերական միջավայրի առանձնահատուկ պայմանների ազդեցությունը բուսական օրգանիզմների ֆերմենտատիվ գործընթացների վրա: 1956 թվականից սկսվեցին հետազոտություններ տարվել երկարաժամկետ ուղեծրային թռիչքների ժամանակ կենսաապահովման համակար-

ՆԵՍԿՕ, Փարիզ, 1962 թ.):

Ն. Սիսականը մի շարք ակադեմիական ինստիտուտներում տիեզերական կենսաբանության հիմնախնդիրների ուսումնասիրության շուրջ 10 լաբորատորիաների ստեղծման նախաձեռնողն էր: Սա գիտությունների ակադեմիային ոչ միայն առաջնությունն ապահովեց տիեզերական կենսաբանության և բժշկության հիմնախնդիրների հետազոտություններում, այլև առաջատար դիրքեր՝ հայրենական և համաշխարհային գիտության մեջ:

Տիեզերագնացության զարգացման գործում ունեցած ծառայությունների համար Ն. Սիսականն ընտրվեց Տիեզերագնացության միջազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ և Կենսատիեզերագնացության միջազգային կոմիտեի նախագահ:

Գիտնականի ներդրումը գիտության զարգացման գործում ստացավ համաշխարհային ճանաչում, գնահատվեց պետական և գիտական բարձր պարգևներով՝ ԽՍՀՄ պետական մրցանակ (1952 թ.), ԽՍՀՄ ԳԱ Ա. Ն. Բախի անվան մրցանակ (1951, 1966 թթ.), ԽՍՀՄ ԳԱ Ի. Ի. Մեչնիկովի անվան մրցանակ (1951 թ.), «Աշխատանքային Կարմիր դրոշի» երեք շքանշաններ և «Պատվո նշան» շքանշան: 1953 թ. Ն. Մ. Սիսականն ընտրվեց ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, 1960 թ.՝ 53 տարեկանում՝ ակադեմիկոս:

1964 թ. ակադեմիկոս Նորայր Սիսականն ընտրվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր գիտաժողովի XIII նստաշրջանի նախագահ: Նրա միջազգային բարձր համբավի ապացույցներից մեկն է նաև այն, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր գիտաժողովի XXXIII նստաշրջանի որոշմամբ Նորայր Սիսականի ծննդյան 100-ամյակն ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2006-2007 թթ. հորեյանական տարեթվերի օրացույցում:

Ինչ վերաբերում է Նորայր Սիսակ-

տաժողովներում և սինպոզիումներում, Սիսականական ընթերցումներում: 2006 թ. հունվարին կայացավ հռչակավոր գիտնականի ծննդյան 100-ամյակի առթիվ հրավիրված «Կենսաքիմիայի, ճառագայթային և տիեզերական կենսաբանության հիմնախնդիրները» III Միջազգային սինպոզիումը: Նորայր Սիսականի անունով այսօր խառնարան կա Լուսնի վրա, փողոցներ Հայաստանի մայրաքաղաք Երևանում և նրա ծննդավայր Աշտարակում, ուր գործում է նրա տուն-թանգարանը և հուշահամալիրը: Երևանի պետական համալսարանում սահմանվել է նրա անվան կրթաթոշակ: Մոսկվայում, Ա. Ն. Բախի անվան կենսաքիմիայի ինստիտուտի և Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի շենքերին ամրացված են հուշատախտակներ: Գիտնականի հիշատակը պահպանվում է նաև նրա կյանքին և գործունեությանը նվիրված գրքերն ու հրապարակումները:

1967 թ. ակադեմիկոս Ա. Ն. Բելոզերսկին գրել է. «Իր ողջ կյանքը Նորայր Սիսականը նվիրել էր գիտությանը ծառայելուն: Իր աշխատասեղանի վրա և լաբորատորիայում նա չէր նկատում ոչ ժամանակը, ոչ հոգնածությունը, ոչ վատառողջությունը: Նա աշխատեց և արարեց տառացիորեն մինչև իր կյանքի վերջին ակնթարթը և մահացավ լաբորատորիայում՝ աշխատասեղանի մոտ, այն պահին, երբ խորհրդածում էր իրեն հետաքրքրող գիտական հարցերի փորձաքարական նոր մոտեցումները»:

Ակադեմիկոս Նորայր Սիսականի կյանքից վաղաժամ հեռանալուց անցել է արդեն 40 տարի (նա մահացավ 1966 թ. մարտին 12-ին), սակայն ականավոր գիտնականի և հիասքանչ մարդու հիշատակը կենդանի է, իսկ նրա պայծառ կերպարը վառ օրինակ է բոլոր նրանց համար, ովքեր իրենց նվիրում են գիտությանը:

Լրացավ Հայկական կենսաքիմիական դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս գիտնական ու մանկավարժ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Հրաչյա Խաչատուրի Բունիաթյանի ծննդյան 100 - ամյակը:

Հ. Բունիաթյանը ծնվել է 1907 թ. մայիսի 1-ին Նոր-Քաջազետում (այժմ՝ ք. Գավառ): Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքում: 1924 թ. տեղափոխվել է Երևան և ավարտել Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: 1930 թ. հաջողությամբ ավարտելով Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը, Հ. Բունիաթյանը նախ աշխատում է որպես կենսաքիմիայի ամբիոնի ասիստենտ, ապա ղեկավարում է Երևանի Ա. Գանգաբուժական-անասնաբուժական, և այնուհետև, ավելի քան երկու տասնամյակ՝ բժշկական ինստիտուտի կենսաքիմիայի ամբիոնը: 1939-ից մինչև 1941 թ. Հ. Բունիաթյանը Երևանի բժշկական ինստիտուտի տնօրենի գիտության գծով տեղակալն էր: 1942-46

մեծ չափով նպաստեց օրգանիզմում ընդհանուր նյութափոխանակության և ուղեղի ֆունկցիոնալ կենսաբանության զարգացմանը: Հ. Բունիաթյանի և իր աշակերտների կողմից ցույց տրվեց, որ դրոման ու արգելակման դեպքում նյութերի փոխանակությունը գլխուղեղում, այդ վիճակներին համապատասխան, ընթանում է հակառակ ուղղությամբ: Դրանով բացահայտվեց Ի.Պ.Պավլովի կողմից առաջադրված արգելակման պրոցեսի բուժիչ ու պաշտպանիչ ազդեցությունը:

Ակադեմիկոս Հ. Բունիաթյանի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ ԳԱԱ Կենսաքիմիայի ինստիտուտում ժամանակակից բարձր մակարդակով կատարված աշխատանքները լայն ճանաչում են գտել ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում: Հ. Բունիաթյանի և նրա աշակերտների կողմից ինստիտուտում զգալի հաջողություններ են ձեռք բերվել ուղեղի հյուսվածքի կենսաքիմիական մի շարք նոր մեխանիզմների բացահայտման և ստացված արդյունքները

կական կենսաքիմիական դպրոցի հիմնադիրն ու ղեկավարը: Նրա ղեկավարությամբ ավելի քան 50 գիտական աշխատողներ պաշտպանել են քեկնածուական և 16-ը՝ դոկտորական քեզեր: Նրա գրչին են պատկանում ավելի քան 250 գիտական աշխատանք ու մեծագույնը: Նա կենսաքիմիայի ինստիտուտի կողմից լույս ընծայվող «Ուղեղի կենսաքիմիայի հարցեր» գիտական ժողովածուների խմբագիրն էր: Ռուսաստանի դաշնության Գիտությունների ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ «Նեյրոքիմիա» հանդեսի ստեղծումը ակադեմիկոս Հ. Բունիաթյանի և նրա կողմից ղեկավարած կենսաքիմիկոսների ծառայության ակնհայտ գնահատումն էր, որոնք նշանակալի ներդրում ունեն նյարդաքիմիայի մի շարք կարևոր ուղղությունների զարգացման ասպարեզում:

Բեղմնավոր էր նաև ակադեմիկոս Հ. Բունիաթյանի հասարակական գործունեությունը: Երկար տարիներ նա ղեկավարել է հանրապետության ֆիզիոլոգների, կենսաքիմի-

Ասպրագեյրները ուսումնասիրեցին փեզերական մարմինների կոր փեսակ

Տիեզերքում գոյություն ունեն մեյսրոնային աստղեր, որոնք լույսով են գերհսկա աստղերի շուրջը՝ փողարկված վերջիններիս քաղաքացու սառը գազի բոժոժում կամ աստղային փուռում: Նման աստղային փեզերական մարմինների բացահայտման է նվիրված Փարիզի համալսարանի աստղագետ Սիլվյեն Զաշի վերջին հետազոտությունները:

Նման չափազանց բարձր էներգիա ունեցող մարմինները, ըստ էության, պետք է շատ պայծառ լինեն, սակայն գերհսկայի արեգակնային հողմով առաջացրած մասնիկների վիթխարի սավառն մեր աստղադիտակների համար գրեթե անեռնայն է դարձնում թե՛ գերհսկային և թե՛ նրա շուրջը պտտվող աստղին: Սակայն 2003 թվականին աստղագետները հայտնաբերեցին առաջին այդպիսի մարմինը. օգնեցին տիեզերական «Ինտեգրալ» գամմա-աստղադիտակի տվյալները:

Այդ ժամանակներից մինչև հիմա հայտնաբերվել են 20 նման երկակի համակարգեր: Դրանց հեռավորությունը մեզից տատանվում է 7-ից 25 հազար լույսային տարվա սահմաններում:

Այդ համակարգերի մեծ մասը, ինչպես պարզվել է, ամբողջական մարմին է, որը պտտվում գերհսկա աստղի շուրջը, որի զանգվածը 30 անգամ գերազանցում է Արևի զանգվածը, իսկ տրամագիծը 20 անգամ մեծ է Երկրի մոլորակի տրամագծից:

Վերը հիշված գերհսկայի մակերևույթից արտանետվող նյութի ծավալը հարյուր պարզավոր անգամ գերազանցում է Արևի մակերևույթից արտանետվող նյութին: Ինչպես պարզվեց, գերհսկայի զուգընկերը նեյտրոնային աստղ է՝ 1,4 Արևի զանգվածով և մոտ 10 կիլոմետր տրամագծով:

Թվում է՝ այդ աստղերը բաժանվում են երկու դասի: Առաջին դասի նեյտրոնային աստղերի ուղեծիրը գրեթե կլոր է և ոչ մեծ՝ ավելի փոքր, քան Արևի հեռավորությունը Մերկուրիից:

Բացահայտվել է նաև, որ նեյտրոնային աստղի վիթխարի գրավիտացիան, հրեշավոր ծառագայթումը և մագնիսական դաշտերը ի գործ չեն մաքրել իրենց ուղեծրի ծանապարհի գազային բոժոժը (պարկուճը), որ ստեղծում է աստղ-հսկան: Իսկ նեյտրոնային աստղի և բոժոժի փոխազդեցությունը առաջացնում է հզոր ծառագայթում, որն էլ կարելի է որսալ և վերծանել:

Երկրորդ դասի նեյտրոնային աստղերը առաջինից տարբերվում են նրանով, որ սրանց ուղեծիրը ծված է: Սրանք պարբերաբար (ոչ միշտ) են հայտնվում հսկայի բոժոժի գազային զանգվածում, և այդ պատճառով էլ ժամանակ առ ժամանակ է որսվում արտացոլվող ռենտգենյան ծառագայթումը:

Գիտնականները կարծում են, որ նման արտասովոր աստղային համակարգեր ավելի շատ կհայտնաբերվեն եվրոպական նոր դասի տիեզերական GLAST գամմա աստղադիտակի օգնությամբ, որը ուղեծիր է ուղարկվելու այս տարվա աշնանը: Ի դեպ, հենց GLAST աստղադիտակային համակարգին նվիրված առաջին գիտաժողովում էլ աստղաֆիզիկոս Սիլվյեն Զաշի գեկուցեց նոր տիեզերական մարմինների նեյտրոնային աստղերի մասին:



ԱԿԱՆԱԿՈՐ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Բունիաթյանի ծննդյան 100 - ամյակի առթիվ

բժշկության մեջ ներդրելու ուղղությամբ:

Հ. Բունիաթյանը և նրա աշակերտները ուշագրավ հետազոտություններ են կատարել էներգետիկ և ազոտային փոխանակության կարևորագույն ռեակցիաներում գլխուղեղի ֆիզիոլոգիայի ակտիվ միացություններից մեկի՝ գամմա-ամինոկարագաքթի և նրա ածանցյալների կենսաքիմիական դերի, ինչպես նաև նյութերի փոխանակության նյարդա-հումորալ կարգավորման պարզաբանման ուղղությամբ: Առաջին անգամ ցույց տրվեց, որ այդ միացության ազդեցությամբ բարձրանում է բջջային թաղանթների թափանցելիությունը ոչ միայն առանձին խոնների, այլև գլյուկոզայի, ամինաթթուների և մի շարք այլ նյութերի նկատմամբ: Ապացուցվեց, որ այդ միացությունը գլխուղեղից բացի գոյանում է նաև այլ օրգաններում, որը հետագայում իր հաստատումն ստացավ արտասահմանյան հեղինակների աշխատանքներում: Կատարված հետազոտությունների հիման վրա Հ. Բունիաթյանը եկավ այն եզրակացության, որ գամմա-ամինոկարագաքթում լինելով թաղանթային ակտիվ միացություն, կարևոր ֆունկցիա է կատարում գլխուղեղի, ինչպես նաև ամբողջ օրգանիզմի հոմեոստազում:

Հ. Բունիաթյանը և նրա աշակերտները կարևոր ուսումնասիրություններ են կատարել գլխուղեղում ազոտային փոխանակության առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում կենսորենական նյարդային համակարգի քիչ ուսումնասիրված այնպիսի բաղադրամասերի հետազոտությունը, ինչպիսիք են կենսաբանական ակտիվ պեպտիդները, մետաղ պարունակող սպիտակուցները և պրոտեոլիպիդները: Հիպոթալամուսից անջատված պեպտիդների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հայտնաբերել մի շարք նյարդահորմոններ, որոնք մեծ հեռավորներ ունեն սրտանոթային և այլ հիվանդությունների բուժման գործում: Պղինձ և երկաթ պարունակող նոր սպիտակուցների անջատման և մաքրման վերաբերյալ աշխատանքները թույլ տվեցին տարբեր օրգանիզմներից անջատել սուպերօքսիդիզմի ֆերմենտը, որը մասնակցում է բջիջներում, այսպես կոչված, սուպերօքսիդային ռադիկալի քայքայմանը (վերջինիս գոյությունը նպաստում է օրգանիզմում մի շարք հիվանդությունների առաջացմանը): Այդ աշխատանքները նույնպես կարևոր կիրառական նշանակություն ունեն:

Հ. Բունիաթյանի անմիջական ղեկավարությամբ հետաքրքիր աշխատանքներ են կատարվել հասակային նյարդաքիմիայի բնագավառում՝ նվիրված կենդանիների վաղ օնտոգենեզում կենսաէներգետիկական և ծեր օրգանիզմներում ամինաթթվային փոխանակությանը:

Ակադեմիկոս Հ. Բունիաթյանը կարևոր ներդրում ունի մեր հանրապետությունում երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում և հիրավի հանդիսանում է Հայ-

կոսների և ղեղաբանների ընկերությունները: Նա ակտիվորեն մասնակցել է միջազգային կենսաքիմիական մի շարք կոնգրեսների ու գիտաժողովների աշխատանքներին, գեկուցումներով հանդես եկել արտասահմանյան բազմաթիվ երկրների գիտական կենտրոններում, ընտրվել Գերմանիայի բնախոյզների Լեոպոլդինա ակադեմիայի անդամ: Աշխարհի 14 խոշոր գիտնականների շարքում Հ. Բունիաթյանը ընտրվել էր նյարդաքիմիկոսների միջազգային ընկերության խորհրդի անդամ: Ակադեմիկոս Հ. Բունիաթյանը գիտության նշանավոր կազմակերպիչ էր: Նա աչքի էր ընկնում գիտության տարբեր բնագավառներին և մշակույթին վերաբերվող հանրագիտարանային գիտելիքներով, հսկայական աշխատասիրությամբ, որոնք ներդաշնակորեն գուգակցվում էին սկզբունքայնությամբ և պահանջկոտությամբ իրեն և իր աշակերտներին նկատմամբ, զգայուն ու հոգատար վերաբերմունքով դեպի գիտական աշխատողները և, հատկապես, երիտասարդները: Ինչպես նշել է ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը, Հ. Բունիաթյանը կրթություն ստանալով և աշխատելով Հայաստանում, դարձավ միաջազգային համբավ ունեցող գիտնական:

Հ. Բունիաթյանը ոչ միայն խոշոր գիտնական էր, այլև հիանալի մանկավարժ: Կենսաքիմիայի վերաբերյալ նրա դասախոսությունները Երևանի պետական համալսարանի, բժշկական և Անասնաբուժական ու անասնաբուժական ինստիտուտների ուսանողների համար միշտ աչքի էին ընկնում իրենց կուռ շարդանքով, գիտական տրամաբանությամբ, հետաքրքրությամբ և խորությամբ: Մեր հանրապետությունում աշխատող շատ պրոֆեսորներ, գիտության դոկտորներ և քեկնածուներ, տարբեր լաբորատորիաների ու գիտական հիմնարկությունների ղեկավարներ հանդիսանում են Հ. Բունիաթյանի աշակերտները: Այդ կարևոր բազմամենքը նրան բնութագրում է որպես բազմահմուտ մանկավարժի և գիտնականի: Օժտված լինելով մեծ խորագիտությամբ ու ներքին կուլտուրայով, գուգակցված բացառիկ համեստությամբ, Հ. Բունիաթյանը, հիրավի, վայելում էր իր աշակերտների ու բարեկամների խոր հարգանքն ու սերը:

Ականավոր գիտնականի ու մանկավարժի, մարդու և քաղաքացու՝ ակադեմիկոս Հրաչյա Խաչատուրի Բունիաթյանի կերպարը վառ օրինակ կարող է ծառայել գիտնականների երիտասարդ սերնդի համար:

Ա. Ա. ԳԱՆՈՅԱՆ

Հայաստանի կենսաքիմիկոսների միության նախագահ, ակադեմիկոս

Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

պրոֆեսոր, կենսաբանական գիտությունների դոկտոր

Գ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր

Օկորցնենք պատմական հիշողությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՅՈՒՄ...

20 մարտի, 2007...

Այսօրվա թուրքիական բազմաթիվ մշակույթների մի իսկական թանգարան է: Հունա-հռոմեական, բյուզանդական, ասորա-բաբելական... ո՞րը թվես: Փոքր Ասիա կոչվող տարածքը, որ հետո Անատոլիա կոչվեց, իսկական պատմա-մշակութային թանգարան է և այդ թանգարանի կենտրոնական «սրահը» Հայոց աշխարհն է՝ Մեծ ու Փոքր Հայքերով, Հայոց բարձրավանդակով, բնիկ հայերի թագավորությունը: Այդ տարածքի սիրտը՝ Վանա լիճը, իր շրջակայքով, իր պատմությունով, հերոսական, նաև՝ ողբերգական անցյալով սիրտն է մի երկրի, որ Արևելյան թուրքիա է կոչվում ու այդ հողը՝ մեր սուրբ հողն է, որ մի դար, գուցե և ավելի, ավերվել ու ավերվում է: Հիմա թուրքիական հանկարծ «սթափվել» է ու Աղթամար կղզում բացվում է ս. Խաչ վանքը: Հազար տարի առաջ կառուցված ու բացված վանքը վերաբացվում է որպես թուրքիայի պատմության թանգարան: Նրա այսօրվա տերերը ի՞նչ հաճույքով գետնին կիսվասարեցնեին հայոց այդ հիասքանչ կոթողը, բայց ի՞նչ արած. հասարակական կարծիք կա, միջազգային հանրություն, որի աչքին երկիրն ուզում է երևալ քաղաքակիրթ ու ազատական: Բայց թուրքը չի կարող իրեն շատ կեղծել, նա ամեն ինչ անում է եվրոպական հայտով, բայց թուրքավարի: Բացելով հազար տարի առաջ բացված Սուրբ Խաչ եկեղեցին, «զարդարված» կիսալուսինով և Ք. Ա. թաթուրքի նկարներով, իշխանությունները ծայր տվեցին իրենց 2-3 պաշտոնյայի ու՝ վերջ: Դե գզույշ է թուրքական դեմոկրատիան. չիրավիրել Հայաստանից ներկայացուցիչներ, կնշանակել առաջացնել միջազգային հանրության բնադատությունը, իսկ ծայր տալ չէին կարող. բա որ հայերը ասեին ի լուր աշխարհի այն, ինչից նրանք՝ քաղաքակիրթ թուրքերը դեռ վախենում են: Բայց ինչ է, մարդիկ չե՞ն տեսնում եկեղեցու բարձրաքանդակները, թե հայի արյունով

ներկված իրենց կարմիր դրոշմ ու կիսալուսինը կարող են թուրքիացույթյան մեջ գցել միջազգային գիտական հասարակությանն ու միջազգային կարծիքը:

Ինչևէ. Սուրբ Խաչը բացեց իր դռները, գոնե դրանով փրկվեց արժանանալու այն ճակատագրին, որին արժանացել են Ս. Կարապետն ու Խծկոնքը, Անիի Մայր տաճարն ու Ազրիվանքը, ու էլի հազարավոր այլ հուշարձաններ:

Ս. Խաչ եկեղեցու վերաբացման արարողությունը մեզ հիշեցրեց մեր շատ շրջաններում բացվող հուշարձանները: Այսինքն՝ այն «շրջանային» մասշտաբի արարողություն էր, այսինքն՝ թուրքավարի, ոչ ավելին: Մենք չգիտենք, թե մեր պատվիրակությունը ցանկացել է ծայր ուզել, իսկ այն ինչ տեսանք, տխուր տպավորություն թողեց: Ասես վանքի նման մեր պատվիրակությունն էլ պատանդ էր թուրքիայի մշակույթի նախարարության համար: Իսկ գուցե ավելի ակտիվ կենցվածք ունենալու «համաձայնություն» չե՞ն տվել հյուրընկալները:

Բայց մենք Վանա լճում և Վանի եկեղեցական միջավայրում մի՞թե հյուրեր էինք... Ո՛չ, դա մերն է, և տիրոջ իրավունքից մեզ զրկողները պետք է իմանան, որ կգա մի օր, և նրանք պատասխան կտան միջազգային հանրության առաջ: Պարզապես մենք էլ դրան պետք է պատրաստ լինենք, չկորցնելով պատմական մեր հիշողությունները:

Շ.Գ. «Լինե՞լ, թե՛ չլինե՞լ» շեֆոփիայն այս միջոց առ է հնչում այս օրերին... միայն մի փոքր խմբագրված՝ «զնա՞լ, թե՛ չզնալ». արդյոք, ճիշտ էր, մեր լուսավորության մեկնումը Վան: Ասեմք ուղղակի՝ այո՛, ճիշտ էր: Մեմ համաձայն չեմ այն ֆնադասներին, ովքեր լողում են, թե ճիշտ չզնալն էր: Ի վերջո հայթուրական հարաբերությունը մի իսկական ռազմի դաշ է, և հաղթում է նա, ով չի վախենում կռվից: Բայց եթե ճիշտ է՝ կռվի մեջ մենք» սխալ է լուսավորվածակեր:



Գիտություն

Գլխավոր խմբագիր Վլադիմիր ՍՈՒՐԱՂՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդասյան 24դ,

հեռախոս՝ 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 25.04.2007թ.

"ГИТУТЮН" ("Найка") газета НАН РА

